— Բարի երեկոյ, եղբայր,— ըսաւ,— շուտ մը՝

— Աստուծոյ բարին գա վրադ, բարի եկար: — Պատասխանեց եւ դարձաւ,— Տղա՛ք, լոյս բերէք, սենեակը կրակ վառեցէք,— հրամայեց: Եւ երբ ճրագն եկաւ եւ երկու հին բարեկամք իրար ճանչցան ու պագտուեցան.

— Եղբա՛յր, ինչո՞ւ ձայն չես հանէր,— կ'ըսէր Կարապետ:

— Ձայն չեմ հանէր իմանալու համար թէ այս քանի մը տարուան միջոցին հայ հիւրընկալութիւնը փոխուե՞ր է. բայց՝ փա՛ռք աստուծոյ, նոյնը կը տեսնեմ. իրաւ, տան տէրը դուռը չի բացած կը մռմռա, բայց եկողին՝ բարի ես եկեր, հրամայէ՛, կըսէ: Դարձեալ կը զրուցեմ, կեցցէ՛ մեր Հայաստան եւ հայ, եղբա՛յր, Եփրատն ու Ճորոխ կանցնիս, փողը ձեռքդ գլուխ դնելու տեղ չես գտնէր, այս օրհնած հողին վրայ կէս-գիշերուն քեզ կ'ուգան դուռ կը բանան եւ ոչ միայն դուռ կը բանան՝ այլ գիւղեն կ'իջնեն քեզ ձիւնին, բուքին մէջեն կ'ազատեն, կը հանեն: Աստուած հայուն բարի տա՛:

— Աստուած ձայնիդ լսէ, եղբայր, բայց քանի տարի է մեր մեղքերը միայն տեսաւ, մեր գլխեն պատիժ պատուհասն անպակաս չընէր, դու քանի տարի է օտարութեան ես, չես գիտէր. ի՛նչ քաշեցինք աս անօրէն անողորմ ազգին ձեռքեն, որ յոյնն ու պարսիկ մոռացուց, ոտքին հասած տեղն աւերակ դարձուց:

— Ինչպէ՛ս չգիտեմ, մէկ քանի հատը՝ Մուշ՝ երէկ չէ առջի օր այս ձեռոքս հաւու պէս մորթեցի:

— Աստուած ձեռքերուդ մէջեն այսպիսի գործ պակաս չընէ: Տղա՛ք, բեռերը վար առէք, ձին ախոռ քաշեցէք:

— Բայց դու, Կարապետ եղբայր, զրուցէ՛ թէ գիւղին մէջ իշխաններ հիւր եկա՞ն:

— Մենք իշխան չտեսանք, եղբայր: